ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«----» դեկտեմբերի 2012թ.** **N-------Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Աբովյան փողոցի հ.22 շենքի 66.8քմ ընդհանուր մակերեսով տարածքը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մարիյա Օվակիմյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարիյա Օվակիմյանի խնամակալ Էլեոնորա Մաիլովան դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Աբովյան փողոցի հ.22 շենքի 66.8քմ ընդհանուր մակերեսով տարածքը Մարիյա Օվակիմյանի անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Ներկայումս նշված հասցեում գտնվող տարածքը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

ՀՀ Երևանի Քաղաքային Խորհրդի գործադիր կոմիտեի 1996թ. փետրվարի 2-ի հ.5/4 որոշման համաձայն, Մարիյա Օվակիմյանին թույլատրվել է բարոյապես և ֆիզիկապես մաշվածություն ունեցող շենքի էլեկտրասնուցումն ապահովող էլ. Ենթակայանի փոխարեն նույն շենքի բակում տեղափոխել և կառուցել նոր ավելի հզոր էլ. ենթակայան:

Նախկին հին էլ. Ենթակայանը գտնվում էր Մ. Օվակիմյանին պատկանող բնակարանին կից, որի շահագործմամբ խախտվում էր սանիտարահամաճարակային, հրդեհային անվտանգությունը և շենքի ցնցումականելիության նորմերը, իրական վտանգի սպառնալիք ստեղծելով շենքի բնակիչների կյանքին և առողջությանը:

Մարիյա Օվակիմյանը իր անձնական ֆինանսական միջոցների հաշվին տեղափոխել և կառուցել է նոր էլ ենթակայան, որը շուրջ 16 տարի շահագործվում է <<Էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ-ի կողմից՝ սնուցելով ինչպես իրենց շենքի բնակարանները, այնպես էլ մոտակա շենքերը, ինչպես նաև ապահովում է քաղաքային արտաքին և հարակից տարածքի խանութների լուսավորությունը:

Բացի նշված ենթակայանի շինարարական աշխատանքներից, քաղաքացին կատարել է նաև շենքի շքամուտքերի մալուխների տեղափոխության, շենքին պատճառած վնասի վերականգնման և վնասված սյուների ամրակցման աշխատանքներ՝ նոր սյուների ավելացումներ: Միաժամանակ հին ենթակայանի տարածքը Մ. Օվակիմյանի միջոցներով վերանորոգվել է, տեղադրվել պատուհաններ և մինչ օրս, շուրջ 16 տարի տնօրինվում է Մ. Օվակիմյանի կողմից :

Նկատի ունենալով այն, որ քննարկվող տարածքն անմիջապես կից է Մ.Օվակիմյանի բնակարանին և մինչ օրս տնօրինվում է վերջինիս կողմից, խնդրի կարգավորման նպատակով, տարածքն անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնել Երևան քաղաքի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ